



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

30 օգոստոսի 2016 թվականի

թիվ 93

քաղ. Մոսկվա

«Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) 30-րդ կետին համապատասխան եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձևաչափերի եւ կառուցվածքների նկարագրությունը.

«Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Մահմանեյ, որ սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված՝ էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումը եւ արտաքին ու փոխադարձ առեստրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց ներառման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝

Տ. Մարգարյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի օգոստոսի 30-ի
թիվ 93 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

«Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան.

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագիր.

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի ««Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության

արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» համաձայնագրի իրագործման վերաբերյալ» թիվ 109 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի «Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի ձեւավորման ու վարման կարգը հաստատելու մասին» թիվ 30 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում:

II. Կիրառման ոլորտը

2. Սույն Կանոնները մշակվել են «Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերի նկարագրությունը սահմանելու նպատակներով:

3. Սույն Կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը վերահսկելիս, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

III. Հիմնական հասկացությունները

4. Սույն Կանոնների նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«ավտորիզացում»՝ ընդհանուր գործընթացի մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

«միասնական ռեեստր»՝ գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստր, որի ձևավորումն ու վարումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից.

«լիազորված կազմակերպություն»՝ հաստատություն, կազմակերպություն կամ ձեռնարկություն (այդ թվում՝ բժշկական հաստատություն կամ

կազմակերպություն), որն իրականացնում է բժշկական արտադրատեսակների հետազոտություններ (փորձարկումներ)՝ դրանց գրանցման նպատակով:

Սույն Կանոններում կիրառվող «լնդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «լնդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «լնդհանուր գործընթացի գործառնություն», «լնդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «լնդհանուր գործընթացի մասնակից» հասկացություններն օգտագործվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրման մեթոդիկայով սահմանված իմաստներով:

IV. Հիմնական տեղեկություններ ընդհանուր գործընթացի վերաբերյալ

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում»:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.MM.07, տարբերակ 1.0.0.

1. Ընդհանուր գործընթացի նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակն է ստեղծել նախապայմաններ գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Միության լիազորված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հետ կապված ծախքերի նվազեցման համար՝ բժշկական արտադրատեսակների

շրջանառության ոլորտում ընդհանուր տեղեկատվական տարածության ստեղծման հաշվին:

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

ա) արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ինտեգրված համակարգ) շրջանակներում ստեղծել գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող լիազորված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվական ռեսուրս.

բ) ապահովել Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) լիազորված մարմինների կողմից ինտեգրված համակարգի միջոցներով միասնական ռեեստրից՝ էլեկտրոնային տեսքով եւ ավտոմատացված ռեժիմով տեղեկություններ ստանալու հնարավորությունը.

գ) ապահովել շահագրգիռ անձանց եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատակիցների կողմից, Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ, միասնական ռեեստրից արդիական, ամբողջական եւ հավաստի տեղեկություններ ստանալու հնարավորությունը.

դ) ապահովել միասնական դասակարգիչների եւ տեղեկատուների օգտագործումն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից:

2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.ACT.001	Հանձնաժողով	Միության մարմին, որն ապահովում է միասնական ռեեստրի ձևավորումն ու վարումը. տրամադրում է հասանելիություն միասնական ռեեստրում ներառված տեղեկություններին:
P.MM.07.ACT.001	անդամ պետության լիազորված մարմին	անդամ պետության մարմին, որը Հանձնաժողով է ներկայացնում տեղեկություններ միասնական ռեեստրը թարմացնելու համար եւ ավտոմատացված ռեժիմով ինտեգրված համակարգի միջոցով տեղեկություններ է պահանջում միասնական ռեեստրից
P.MM.07.ACT.002	շահագրգիռ անձ	միասնական ռեեստրից տեղեկատվության հարցում կատարող անձ

3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ըստ իրենց նշանակության խմբավորված՝ ընթացակարգերի ամբողջություն է՝

ա) միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգեր.

բ) միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման ընթացակարգեր:


11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս անդամ պետությունների լիազորված մարմիններն ապահովում են լիազորված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով: Ստացված տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովը փոփոխություններ է կատարում միասնական ռեեստրում եւ հրապարակում այն Միության տեղեկատվական պորտալում: Անդամ պետության լիազորված մարմնի

Էւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է ինտեգրված համակարգի ինտեգրացիոն հարթակի օգտագործմամբ: Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկատվության հասանելիությունը շահագրգիռ անձանց համար իրականացվում է Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ:

Նշված տեղեկությունները ներկայացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի օգոստոսի 30–ի թիվ 93 որոշմամբ հաստատված՝ «Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան:

Ներկայացվող տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի օգոստոսի 30–ի թիվ 93 որոշմամբ հաստատված՝ «Գրանցման նպատակով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող՝ Եվրասիական տնտեսական միության լիազորված կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրություն):

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իրենց նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը՝ ներառյալ գործառնությունների մանրամասնած նկարագրությունը, բերված է սույն Կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջև առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեման: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) գրաֆիկական նոտացիայի օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

4. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խումբը

15. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերն իրականացվում են անդամ պետությունների միասնական ռեեստրում ներառելու համար լիազորված մարմինների կողմից տեղեկությունները ներկայացնելուն զուգընթաց: Անդամ պետության լիազորված մարմինը ձևակերպում է եւ

ինտեգրված համակարգի օգտագործմամբ Հանձնաժողով է ուղարկում լիազորված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունների փոփոխման մասին տեղեկատվություն:


Փոփոխությունների տեսակով պայմանավորված՝ կատարվում են ընդհանուր գործընթացի՝ միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված հետեւյալ ընթացակարգերը՝

«Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» (P.MM.07.PRC.001).

«Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» (P.MM.07.PRC.002).

«Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» (P.MM.07.PRC.003):

16. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:



Նկ. 2. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեման

17. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառվող՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառվող՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.07.PRC.001	միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում	նախատեսված է լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները միասնական ռեեստրում ներառելու համար: Ընթացակարգը ներառում է լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով, միասնական ռեեստրի թարմացումը եւ Միության տեղեկատվական պորտալում դրա հրապարակումը:
P.MM.07.PRC.002	միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում	նախատեսված է միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններում փոփոխություններ կատարելու համար: Ընթացակարգը ներառում է լիազորված կազմակերպության վերաբերյալ փոփոխված տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով, միասնական ռեեստրի թարմացումը եւ Միության տեղեկատվական պորտալում դրա հրապարակումը:
P.MM.07.PRC.003	միասնական ռեեստրից տեղեկությունների հանում	նախատեսված է լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները միասնական ռեեստրից հանելու համար: Ընթացակարգը ներառում է միասնական ռեեստրից հանման ենթակա՝ լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը

		Հանձնաժողով, միասնական ռեեստրի թարմացումը եւ Միության տեղեկատվական պորտալում դրա հրապարակումը:
--	--	---

5. Միասնական ռեեստրից տեղեկություններ
 ներկայացնելու ընթացակարգերի խումբը

18. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերն իրականացվում են անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից հարցումներ ստանալու դեպքում: Ընդ որում, կարող են կատարվել հարցումների հետեւյալ տեսակները՝

միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցում.

միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում.

միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների հարցում:

Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցումը կատարվում է անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերում պահվող՝ միասնական ռեեստրում ներառված՝ լիազորված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները միասնական ռեեստրում պարունակվող ու Հանձնաժողովում պահվող տեղեկությունների հետ սինքրոնացնելու անհրաժեշտությունը գնահատելու նպատակներով:

Միասնական ռեեստրից տեղեկությունների հարցումը կատարվում է միասնական ռեեստրում ներառված՝ բոլոր անդամ պետությունների կամ հարցման պայմաններից կախված՝ անդամ պետություններից մեկի լիազորված կազմակերպությունների վերաբերյալ արդիական տեղեկություններն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու նպատակներով: Միասնական ռեեստրից տեղեկությունների հարցումը կատարվում է ինչպես ընթացիկ ամսաթվի, այնպես էլ հարցման մեջ նշված ամսաթվի դրությամբ:

Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների հարցումը կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից փոփոխված տեղեկություններն ստանալու նպատակներով: Հարցումը կատարելիս ներկայացվում են տեղեկություններ միասնական ռեեստրից, որոնք ավելացվել կամ փոփոխվել են հարցման մեջ նշված ամսաթվից ու ժամից սկսած՝ մինչև հարցումը կատարելու պահը: Հարցման պայմաններից կախված՝ ներկայացվում են տեղեկություններ միասնական ռեեստրում ներառված՝ բոլոր անդամ պետությունների կամ անդամ պետություններից մեկի լիազորված կազմակերպությունների վերաբերյալ: Նշված հարցումն օգտագործվում է ազգային տեղեկատվական ռեսուրս տեղեկությունների սկզբնական բեռնման ժամանակ, օրինակ՝ ընդհանուր գործընթացն սկսելիս, նոր անդամ պետությանը դրանում ընդգրկելիս, խափանումից հետո տեղեկատվությունը վերականգնելիս:

Հարցման տեսակից կախված՝ կատարվում է միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված հետևյալ ընթացակարգերից որեւէ մեկը՝


«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում» (P.MM.07.PRC.004).

«Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» (P.MM.07.PRC.005).

«Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների ստացում» (P.MM.07.PRC.006):

Նշված ընթացակարգերը կարող են կատարվել հաջորդաբար կամ յուրաքանչյուր ընթացակարգ կարող է կատարվել մյուսներից առանձին՝ կախված հարցման նպատակներից:

19. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեման

20. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.07.PRC.004	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում	նախատեսված է անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ստացված հարցումների հիման վրա միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի ու ժամի վերաբերյալ ինտեգրված համակարգի միջոցով

		տեղեկատվություն ներկայացնելու համար
P.MM.07.PRC.005	միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում	նախատեսված է անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ստացված հարցումների հիման վրա՝ ինտեգրված համակարգի միջոցով միասնական ռեեստրից նշված ամսաթվի դրությամբ արդիական տեղեկություններ ներկայացնելու համար
P.MM.07.PRC.006	միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների ստացում	նախատեսված է անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ստացված հարցումների հիման վրա՝ ինտեգրված համակարգի միջոցով միասնական ռեեստրից փոփոխված տեղեկություններ ներկայացնելու համար

V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

21. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց վերաբերյալ կամ որոնցից տեղեկությունները փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև փոխգործակցության ընթացքում, բերված է 4-րդ աղյուսակում:

Աղյուսակ 4

Տեղեկատվական օբյեկտների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.07.BEN.001	միասնական ռեեստր	տեղեկատվական ռեսուրս, որը պարունակում է տեղեկություններ գրանցման նպատակներով բժշկական արտադրատեսակների հետազոտությունների (փորձարկումների) անցկացումն իրականացնող լիազորված

		կազմակերպությունների վերաբերյալ եւ որի ձեւավորումն ու վարումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա
--	--	--

VI. Ընդհանուր գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը

22. Տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող Հանձնաժողովի աշխատակիցները եւ պաշտոնատար անձինք տեղեկությունների ամբողջական ու ժամանակին փոխանցումն ապահովելուն ուղղված պահանջները չկատարելու համար կարգապահական պատասխանատվության են ենթարկվում «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի տեղեկատուներն ու դասակարգիչները

23. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 5-րդ աղյուսակում:

Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.019	աշխարհի երկրների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է երկրների անվանումների ցանկը եւ դրանց ծածկագրերը՝ ISO 3166-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.024	լեզուների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է լեզուների անվանումների ցանկը եւ դրանց ծածկագրերը՝ ISO 639-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.054	կազմակերպչական ձևերի դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է կազմակերպչական ձևերի ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.MM.07.CLS.001	բժշկական կազմակերպությունների գործունեության տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է բժշկական կազմակերպությունների գործունեության տեսակների ցանկը


VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

1. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերը

«Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգը

(P.MM.07.PRC.001).

24. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.MM.07.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 4-րդ նկարում:



Նկ. 4. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.MM.07.PRC.001) կատարման սխեման

25. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգը (P.MM.07.PRC.001) կատարվում է լիազորված կազմակերպության աստեստավորման դեպքում՝ միասնական ռեեստրում ներառելու համար անդամ պետության լիազորված մարմնի կողմից այդ լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու նպատակով:

26. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.MM.07.OPR.001), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձեռակերպվում է Զանձնաժողով են ներկայացվում տեղեկություններ՝ միասնական ռեեստրում ներառելու համար:

27. Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.MM.07.OPR.002), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ստանում է տեղեկություններ, կատարում է դրանց մշակումը եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում ներկայացված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը:

28. Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում» գործառնությունը (P.MM.07.OPR.003), որի կատարման արդյունքներով տեղեկություններն ուղարկված անդամ պետության լիազորված մարմինն ստանում է տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումը:

29. «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.MM.07.OPR.002) կատարման դեպքում կատարվում է «Տեղեկությունները ներառելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում» գործառնությունը (P.MM.07.OPR.004), որի կատարման արդյունքներով Միության տեղեկատվական պորտալում հրապարակվում է լիազորված կազմակերպության վերաբերյալ ներառված տեղեկություններ պարունակող թարմացված միասնական ռեեստրը:

30. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.MM.07.PRC.001) կատարման արդյունքներն են լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունների ներառումը միասնական ռեեստրում եւ դրա հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

31. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.MM.07.PRC.001) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

«Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի
(P.MM.07.PRC.001) շրջանակներում կատարվող՝
ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.07.OPR.001	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 7-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.002	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 8-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.003	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 9-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.004	տեղեկությունները ներառելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում	բերված է սույն Կանոնների 10-րդ աղյուսակում

Աղյուսակ 7

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.MM.07.OPR.001) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.001
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկություններն ստանալու դեպքում
5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը

6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեռակերպում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները եւ ուղարկում դրանք Հանձնաժողով՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները փոխանցվել են Հանձնաժողովին

Աղյուսակ 8

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության
(P.MM.07.OPR.002) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.002
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները ստանալու դեպքում («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.MM.07.OPR.001))
5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեռագրերը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռագրերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները եւ ստուգում դրանք՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Ստուգումը հաջողությամբ կատարելու դեպքում կատարողն իրականացնում է միասնական ռեեստրում տեղեկությունների ներառումը՝ նշելով տեղեկությունների թարմացման ամսաթիվն ու ժամը, եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում ծանուցում՝ մշակման արդյունքի ծածկագրով, որը համապատասխանում է տեղեկությունների ներառմանը՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:

7	Արդյունքները	միասնական ռեեստրը թարմացվել է, միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ուղարկվել է անդամ պետության լիազորված մարմին
---	--------------	--

Աղյուսակ 9

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնության (P.MM.07.OPR.003) նկարագրությունը


Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.003
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում ստանալու դեպքում («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.MM.07.OPR.002))
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձևաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները մշակելու արդյունքի մասին ծանուցումը եւ ստուգում այն՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ստացվել է

«Տեղեկությունները ներառելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում» գործառնության (P.MM.07.OPR.004) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.004
2	Գործառնության անվանումը	տեղեկությունները ներառելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրը թարմացնելուց հետո («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.MM.07.OPR.002))
5	Սահմանափակումները	-
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը միասնական ռեեստրը հրապարակում է Միության տեղեկատվական պորտալում
7	Արդյունքները	թարմացված միասնական ռեեստրը հրապարակվել է Միության տեղեկատվական պորտալում

«Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգ (P.MM.07.PRC.002)

32. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.MM.07.PRC.002) կատարման սխեման ներկայացված է 5-րդ նկարում:



Նկ. 5. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում»
 ընթացակարգի (P.MM.07.PRC.002) կատարման սխեման

33. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.MM.07.PRC.002) կատարվում է միասնական ռեեստրում ներառված լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում

34. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.MM.07.OPR.005), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում է Հանձնաժողով են ներկայացվում լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները՝ միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար:

35. Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.MM.07.OPR.006), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ստանում է նշված տեղեկությունները, դրանք մշակում եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում ներկայացված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը:

36. Անդամ պետության լիազորված մարմնի կողմից տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.MM.07.OPR.007), որի կատարման արդյունքներով տեղեկություններն ուղարկված անդամ պետության լիազորված մարմինն ստանում է միասնական ռեեստրում տեղեկությունները փոփոխելու արդյունքների մասին ծանուցումը:

37. «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.MM.07.OPR.006) կատարման դեպքում կատարվում է «Տեղեկությունները փոփոխելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում» գործառնությունը (P.MM.07.OPR.008), որի կատարման արդյունքներով Միության տեղեկատվական պորտալում հրապարակվում է միասնական ռեեստրը, որը պարունակում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստացված տեղեկությունները՝ միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար:

38. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.MM.07.PRC.002) կատարման արդյունքները միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների թարմացումն ու հրապարակումն է: Ընդ որում, միասնական ռեեստրից հրապարակվում են միայն ընթացիկ ամսաթվի դրությամբ արդիական տեղեկությունները:

39. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.MM.07.PRC.002) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 11-րդ աղյուսակում:

Աղյուսակ 11

«Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.MM.07.PRC.002) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.07.OPR.005	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 12-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.006	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 13-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.007	միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 14-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.008	տեղեկությունները փոփոխելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում	բերված է սույն Կանոնների 15-րդ աղյուսակում

Աղյուսակ 12

«Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.MM.07.OPR.005) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.005
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները փոփոխելու դեպքում

5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեւակերպում է լիազորված կազմակերպության վերաբերյալ փոփոխված տեղեկությունները եւ ուղարկում դրանք Հանձնաժողով՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները փոխանցվել են Հանձնաժողովին

Աղյուսակ 13

«Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.MM.07.OPR.006) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.006
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկություններն ստանալու դեպքում («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.MM.07.OPR.005))
5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները եւ ստուգում դրանք՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Ստուգումը հաջողությամբ կատարելու դեպքում ավելի վաղ փոխանցված տեղեկությունները նշվում են որպես ոչ արդիական, դրանց մասին նշվում է փոփոխությունների պատմության մեջ, եւ դրանք

		այլևս չեն արտացոլվում Միության տեղեկատվական պորտալում: Փոփոխված տեղեկությունները ներառվում են Միասնական ռեեստրում եւ հրապարակվում են Միության տեղեկատվական պորտալում: Կատարողն անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում ծանուցում՝ մշակման արդյունքի ծածկագրով, որը համապատասխանում է տեղեկությունների փոփոխմանը՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրը թարմացվել է, միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցումն ուղարկվել է անդամ պետության լիազորված մարմին

Աղյուսակ 14

«Միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնության (P.MM.07.OPR.007) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.007
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցում ստանալու դեպքում («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.MM.07.OPR.006))
5	Մահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցումը եւ ստուգում այն՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցում


«Տեղեկությունները փոփոխելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում» գործառնության (P.MM.07.OPR.008) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.008
2	Գործառնության անվանումը	տեղեկությունները փոփոխելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է տվյալների միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելուց հետո («Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.MM.07.OPR.006))
5	Սահմանափակումները	-
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը միասնական ռեեստրը հրապարակում է Միության տեղեկատվական պորտալում
7	Արդյունքները	թարմացված միասնական ռեեստրը հրապարակվել է Միության տեղեկատվական պորտալում

«Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում»

ընթացակարգ (P.MM.07.PRC.003):

40. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.MM.07.PRC.003) կատարման սխեման ներկայացված է 6-րդ նկարում:



Նկ. 6. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.MM.07.PRC.003) կատարման սխեման

41. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգը (P.MM.07.PRC.003) կատարվում է լիազորված կազմակերպության վերաբերյալ միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու անհրաժեշտության դեպքում:

42. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.MM.07.OPR.009), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձևակերպվում է Հանձնաժողով են ներկայացվում տեղեկություններ՝ լիազորված կազմակերպությունը միասնական ռեեստրից հանելու համար:

43. Լիազորված կազմակերպությունը միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում և մշակում» գործառնությունը (P.MM.07.OPR.010), որի կատարման

արդյունքներով Հանձնաժողովն ստանում է նշված տեղեկությունները, դրանք մշակում եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը:

44. Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.MM.07.OPR.011), որի կատարման արդյունքներով տեղեկություններն ուղարկված անդամ պետության լիազորված մարմինն ստանում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը:

45. «Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.MM.07.OPR.010) կատարման դեպքում կատարվում է «Տեղեկությունները ներառելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում» գործառնությունը (P.MM.07.OPR.012), որի կատարման արդյունքներով Միության տեղեկատվական պորտալում հրապարակվում է միասնական ռեեստրը՝ լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները հանելուց հետո:

46. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.MM.07.PRC.003) կատարման արդյունքներն են Միասնական ռեեստրի թարմացումն ու դրա հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում: Ընդ որում, միասնական ռեեստրից հրապարակվում են միայն ընթացիկ ամսաթվի դրությամբ արդիական տեղեկությունները:

47. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.MM.07.PRC.003) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 16-րդ աղյուսակում:

«Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի
(P.MM.07.PRC.003) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր
գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.07.OPR.009	միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 17-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.010	միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 18-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.011	միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 19-րդ աղյուսակում
P.MM.07.OPR.012	տեղեկությունները հանելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում	բերված է սույն Կանոնների 20-րդ աղյուսակում

«Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.MM.07.OPR.009) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.009
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է լիազորված կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները միասնական ռեեստրից հանելու դեպքում:
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը

6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեռակերպում է լիազորված կազմակերպությունը միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները եւ ուղարկում դրանք Հանձնաժողով՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները փոխանցվել են Հանձնաժողովին

Աղյուսակ 18

«Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.MM.07.OPR.010) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.010
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները կատարողի կողմից ստանալու դեպքում («Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.MM.07.OPR.009))
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեռաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	<p>կատարողն ընդունում է միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները եւ ստուգում դրանք՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:</p> <p>Ստուգումը հաջողությամբ անցկացնելու դեպքում կատարողը տեղեկությունները հանում է միասնական ռեեստրից, ինչպես նաեւ արձանագրում է տեղեկությունների թարմացման ամսաթիվն ու ժամը: Միասնական ռեեստրից հանվող տեղեկությունները պահպանվում են փոփոխությունների կատարման պատմությանը ծանոթանալու հնարավորությունն ապահովելու համար եւ անհասանելի են դառնում հետագա մշակման համար: Կատարողը ձեռակերպում է եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում ծանուցում՝ մշակման արդյունքի ծածկագրով, որը</p>

		համապատասխանում է տեղեկությունների հանմանը՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:
7	Արդյունքները	միասնական ռեեստրը թարմացվել է, միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցումն ուղարկվել է անդամ պետության լիազորված մարմին

Աղյուսակ 19

«Միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու արդյունքների
մասին ծանուցման ստացում» (P.MM.07.OPR.011)
գործառնության նկարագրություն


Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.011
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու արդյունքների մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցում ստանալու դեպքում («Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.MM.07.OPR.010))
5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է ծանուցումը եւ ստուգում այն՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու արդյունքների մասին ծանուցումն ստացվել է

«Տեղեկությունները հանելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում» (P.MM.07.OPR.012) գործառնության նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.07.OPR.012
2	Գործառնության անվանումը	տեղեկությունները հանելուց հետո միասնական ռեեստրի հրապարակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրից տեղեկությունները հանելուց հետո («Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.MM.07.OPR.010))
5	Սահմանափակումները	-
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը թարմացված միասնական ռեեստրը հրապարակում է Միության տեղեկատվական պորտալում
7	Արդյունքները	թարմացված միասնական ռեեստրը հրապարակվել է Միության տեղեկատվական պորտալում

2. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերը «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգ (P.MM.07.PRC.004)

48. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.MM.07.PRC.004) կատարման սխեման ներկայացված է 7-րդ նկարում:



Նկ. 7. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի և ժամի մասին տեղեկատվության ստացում» (P.MM.07.PRC.004) ընթացակարգի կատարման սխեման

